ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«31» հոկտեմբերի 2014թ. N 214

ք. Արմավիր

ՎԱՐԱԶԴԱՏ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՔՈԼՈԶՅԱՆԻՆ ԵՎ ՆՈՒՆԵ ՖՐՈՒՆԶԻԿԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N119-Ա որոշումը, Վարազդատ Քոլոզյանի և Մեծամորի քաղաքապետարանի «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ-ի միջև 2014 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված բնակարանի վարձակալության մասին պայմանագիրը և Վարազդատ Ֆրունզիկի Քոլոզյանի 2014 թվականի հոկտեմբերի 30-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Վարազդատ Ֆրունզիկի Քոլոզյանին և Նունե Ֆրունզիկի Գինոսյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի քաղաքապետի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N119-Ա որոշմամբ վարձակալական հիմունքներով հատկացված Մեծամոր քաղաքի թիվ 11 շենքի թիվ 41 երկուսենյականոց բնակարանը՝ 60.26 քմ ընդհանուր մակերեսով, 34 քմ բնակելի մակերեսով անհատույց մասնավորեցնել՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*